

Ա.Ա. ՕՀԱՆՅԱՆ

**ԴԱՎԻԹ-ԲԵԿԻ ԱՐՁԱՆԻ ԱՐՎԵՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ
ԴՐԱ ԴԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԿԵՐՊԱՐՎԵՍՏԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ**

Անդրադարձ է կատարվում քանդակագործ Սարգիս Բաղդասարյանի «Դավիթ-Բեկ» մոնումենտալ արձանի արվեստաբանական վերլուծությանը: Ուսումնասիրվել և ներկայացվել են արձանի ստեղծման պատմությունը, տեխնիկական առանձնահատկությունները և գեղարվեստական մեծարժեքությունը: Դիտարկվել են քանդակի՝ ձևական և նյութական առանձնահատկությունները՝ ուշադրություն դարձնելով դինամիկ դիրքին, դետալներին և շրջակա բնապատկերի հետ համադրությանը: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվել քանդակի կոմպոզիցիոն լուծումներին, մասնավորապես՝ գոռելիեֆի տեսքով իրականացված 17- մետրանոց պատվանդանին ամրացված արձանին, որտեղ նժույգի 4 ոտքերն օդում են: Բացահայտում են արձանի արվեստաբանական կարևորությունը և դրա դերակատարությունը հայկական կերպարվեստի համատեքստում: Քննարկվել է նաև արձանի խորհրդանշական դերը հայ ազգային-ազատագրական պայքարի համապատկերում: Առանձնանշելի է, որ Դավիթ-Բեկի պատմական կերպարի՝ բաղդասարյանական լուծումը դարձել է ոչ միայն արվեստի բարձրարժեք նմուշ, այլև ազգային ինքնության և մշակութային ժառանգության կարևոր խորհրդանիշ:

Առանցքային բաներ. Դավիթ-Բեկ, ազգային հերոս, պատմական համատեքստ, ազատագրական պայքար, արձան, Սարգիս Բաղդասարյան, մշակութային արժեք:

Ներածություն: Հայ մոնումենտալ արվեստի պատմության մեջ առանձնահատուկ տեղ են զբաղեցնում ազգային-ազատագրական պայքարի հերոսներին նվիրված հուշարձանները: Դրանք ոչ միայն պատմական անցյալի վկայություններ են, այլև ժողովրդի հավաքական հիշողության և ինքնության կարևոր խորհրդանիշներ: Այս համատեքստում բացառիկ նշանակություն ունի քանդակագործ Սարգիս Բաղդասարյանի կերտած Դավիթ-Բեկի մոնումենտալ արձանը, որը տեղադրվել է Կապան քաղաքում 1978 թվականին (նկ.1):

Արձանը ներկայացնում է 18-րդ դարի հայ ազատագրական շարժման նշանավոր առաջնորդին՝ Դավիթ-Բեկին, որի գործունեությունը դարձել է հայրենասիրության և ազգային-ազատագրական պայքարի խորհրդանիշ: Քանդակագործը միավորել է պատմական ճշմարտությունը և գեղարվեստական արտահայտչականությունը՝ ստեղծելով հուշարձան, որը դարձել է ոչ միայն Կապան քաղաքի գլխավոր խորհրդանիշներից, այլև հայ արվեստի կոթողային նվաճումներից մեկը:

Հետազոտությունը նվիրված է հուշարձանի ստեղծման պատմությանը, գեղարվեստական առանձնահատկություններին և նրա դերին հայ արվեստի և

մշակույթի համատեքստում: Հատուկ ուշադրություն է դարձվում քանդակի կոմպոզիցիոն լուծումներին, տեխնիկական իրագործմանը և խորհրդանշական դերին:



Նկ. 1. Դավիթ-Քեկի հուշարձանը Կապան քաղաքում

Թեմայի արդիականությունը և նորույթը: Արդի ժամանակաշրջանում առավել կարևոր է դառնում մեր մշակութային արժեքների պահպանումն ու ուսումնասիրությունը: Հատկապես կարևորվում է մոնումենտալ արվեստի որպես ազգային ինքնության և պատմական հիշողության կրողի դերը: Սարգիս Բաղդասարյանի «Դավիթ-Քեկ» արձանը, լինելով XX դարի հայ քանդակագործության նշանակալի նմուշներից, պահանջում է մանրակրկիտ ուսումնասիրություն և վերլուծություն:

Դավիթ-Քեկի կերպարի ուսումնասիրությունը թույլ է տալիս վերաիմաստավորել ազգային-ազատագրական պայքարի դասերը: Արձանը ծառայում է որպես կապող օղակ անցյալի և ներկայի միջև: Հատկապես այսօր, երբ լրացել է Դավիթ-Քեկի գոյապայքարի 300-ամյակը, էական է նրա գործունեության և պատմական դերի նորովի մեկնաբանությունը:

Յուրաքանչյուր ստեղծագործություն, գոյություն ունենալով փաստացի տարածության մեջ, ստեղծում է գեղարվեստական իրականության իր տարածությունը: Քանդակի ընկալումը դիտողից ավելի ակտիվություն է պահանջում, քանի որ այն ներառում է դրա եռաչափությունը՝ շոշափելի ծավալն զգալու հնարավորությունը [1]:

Քանդակագործական արվեստի զարգացման համատեքստում անհրաժեշտ է գերազանց իմանալ մոնումենտալ արձանների ստեղծման պատմությունը և առանձնահատկությունները: Կարևոր է բացահայտել Սարգիս Բաղդասարյան քանդակագործի կիրառած նորարարական մոտեցումները և տեխնիկական լուծումները: Մեր ուսումնասիրությունը կնպաստի անցյալ դարի հայ քանդակագործության անցած ճանապարհով հետաքրքրվողներին մասնագիտական մոտե-

ցումներով տեղեկությունների տրամադրմանը, որն ունի նաև ազգային ինքնության ամրապնդման միտվածություն (հարկ է նշել, որ մոնումենտալ արվեստը ծառայում է որպես ազգային ինքնագիտակցության և հայրենասիրության խթանման միջոց):

Ձիարձանը դարձել է Կապան քաղաքի խորհրդանիշներից մեկը՝ նպաստելով տարածաշրջանային ինքնության ձևավորմանը (նկ.2):



Նկ. 2. Դավիթ-Քեկի հուշարձանի բացման արարողությունը Կապան քաղաքում 1978թ. հոկտեմբերի 8-ին

Հուշարձանի՝ օտարների կողմից հետաքրքրվածությունը վկայում է նրա համամարդկային արժեքի մասին: Հետազոտական այս աշխատանքի նորույթն այն է, որ առաջինն է, որում փորձ է արվել ներկայացնել Ս. Բաղդասարյանի արվեստի առանձնահիտելի կողմերը: Աշխատանքը կարող է օգտակար լինել արվեստաբանների, պատմաբանների և մշակութաբանների համար և կարող է

հիմք ծառայել հետագա ուսումնասիրությունների համար: Հետազոտության արդյունքները կարելի է կիրառել կրթական ծրագրերում:

Հետազոտության նպատակը: Հետազոտության նպատակն է բացահայտել և վերլուծել Սարգիս Բաղդասարյանի կերտած «Դավիթ-Բեկ» մոնումենտալ արձանի գեղարվեստական, պատմական և մշակութային նշանակությունը: Մասնավորապես՝ ուսումնասիրել արձանի ստեղծման պատմական հանգամանքները և նախադրյալները, վերլուծել արձանի գեղարվեստական առանձնահատկությունները, կոմպոզիցիոն լուծումներն ու տեխնիկական հնարքները: Հետազոտությունը նպատակ ունի՝ բացահայտելու նաև արձանի դերը՝ որպես ազգային ինքնության և հայրենասիրության խորհրդանիշ, գնահատելու ստեղծագործության ազդեցությունը հայ արվեստի և մշակույթի զարգացման վրա: Փորձել ենք վեր հանել Դավիթ-Բեկի արձանի՝ որպես կոթողային արվեստի նմուշի՝ միջազգային ճանաչման փաստը: Արարատ Աղասյանի խոսքերով՝ «Քանդակագործ Սարգիս Բաղդասարյանը կոնստրուկտիվ-տեխնիկական հետաքրքիր լուծում է առաջարկել. նա ձիարձանը ոչ թե գամել է պատվանդանին, այլ ամրացրել բազալտե բարձր՝ 18 մետրանոց աստիճանավոր, աշտարակաձև հենասյան կողին: Կոմպոզիցիոն տեսակետից դա հնարավոր է դարձրել ձիու չորս ոտքն էլ կտրել գետնից, կենդանու ֆիգուրն օժտել սլացիկությամբ» [2]:

Հետազոտության արդյունքները: Հետազոտության արդյունքում բացահայտվել են քանդակագործական առանձնահատկությունները: Դրանք են. Արձանը պատրաստված է կոփածո պղնձից և ունի 17 մետր բարձրություն, կիրառված է գոռելիեֆի տեխնիկան, որտեղ ձին և հեծյալը միասնական կոմպոզիցիա են կազմում: Նկատել ենք, որ հեղինակը կիրառել է յուրահատուկ տեխնիկական լուծում՝ ձիարձանն ամրացնելով աշտարակաձև հենասյան կողին: Առանձնահատուկ է ձիու չորս ոտքերի օդում գտնվելու հանգամանքը, ինչը ստեղծում է թռիչքի և դինամիկ շարժման տպավորություն:


Հետազոտության մեջ վեր են հանվել արձանի գեղարվեստական արժեքները: Դրանք են. ստեղծված է կատարյալ հավասարակշռություն ձիու և հեծյալի կերպարների միջև, կերպարը բնութագրվում է պարզ, բայց արտահայտիչ գծերով, դինամիկ կոմպոզիցիան արտահայտում է վճռականություն և պայքարի ոգի:

Հետազոտությունը ցույց է տալիս, որ Դավիթ-Բեկի արձանը հանդիսանում է անցյալ դարի հայ մոնումենտալ արվեստի նշանակալի նմուշներից մեկը՝ միավորելով բարձրարժեք գեղարվեստականությունը և խոր հայրենասիրական բովանդակությունը: Արձանը համադրում է կլոր քանդակի և գոռելիեֆի տեխնիկաները: Քանդակագործը կիրառել է նորարարական կոնստրուկտիվ-տեխնիկական լուծում՝ ձիարձանն ամրացնելով 17 մետրանոց աշտարակաձև հենասյան կողին:

Քանդակագործ Սարգիս Բաղդասարյանի կենսագրությունն արդեն իսկ հուշում է, թե ինչու նրա արվեստում առանձնադիտելի են պատմական անցյալի, հերոսականության վերհանումները: Ռազմական ուսումնարանն ավարտած երիտասարդն իր ակտիվ մասնակցությունն է ունեցել Հայրենական մեծ պատերազմի ժամանակ: Հերոսական սխրանքներ է ցուցաբերել առանձնապես Լեհաստանի, Չեխոսլովակիայի, Հունգարիայի համար մղվող թեժ մարտերում: Մեր պատմական անցյալում փնտրելով հերոսականության մղող գիծը և լինելության կենսահորդ ավիշը, քանդակագործն իր աշխատանքների թեմատիկան վերցրել է ոչ վաղ անցյալից՝ հերոսականացման, ազգային-ազատագրական պայքարի ոգու մարմնավորում դարձնելով Դավիթ-Բեկի կերպարը՝ քանդակագործը լուռ, բայց «խոսուն» պղնձաքանդակով շեշտադրում է հայի անկոտրում կամքը: Ս. Բաղդասարյանի արվեստը միավորում է դասական ու ժամանակակից մոտեցումները, ստեղծում ազդեցիկ և հիշարժան քանդակ, որը պատմում է մեր պատմության ու մշակույթի մասին: Սարգիս Բաղդասարյանն արձանի վրա աշխատել է մոտ 10 տարի՝ 1968-1978թթ., միաժամանակ ստանձնել նաև ճարտարապետի դեր: Ձիարձանը Կապանի կենտրոնում տեղադրվել է 1978թ., ընդգրկված է Կապանի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ցանկում:

Տեսությունն ընդամենը տալիս է գործողության սխեմա, դա է նրա նպատակը: Բայց սխեմայի փոխանցումը չի կարող արժեքավոր գործ ստեղծել: Քանդակի տեսությունը ձգտում է հասկանալ արվեստը՝ որպես կյանքն արտացոլող երևույթներից մեկը, սակայն կա պարտադիր բաղադրիչ, ստեղծագործական ազդակ՝ մի բան, որը սխեման բարձրացնում է գեղարվեստի մակարդակի [3]:

Այս արվեստի գործը՝ որպես սերունդների երթի լուռ վկա, պետք է շարունակաբար ուսումնասիրվի և գնահատվի: Հատկանշական է, որ հուշարձանի գեղարվեստական արժեքը միջազգային ճանաչում է ստացել. 1980-ական թվականներին Մոսկվայի Տրետյակովյան պատկերասրահը ցանկություն է հայտնել իր հավաքածուում ունենալ արձանի բրոնզե և բազալտե մոդելները (նկ.3): 2022 թվականին ՀՀ կենտրոնական բանկը թողարկել է արձանի պատկերով հուշամեդալ (նկ.4): «Դավիթ-Բեկ» արձանը հանդիսանում է ոչ միայն պատմական անցյալի հուշարձան, այլև ներկայի համար ոգեշնչման աղբյուր: Այն շարունակում է ծառայել որպես հայրենասիրական ոգու բարձրացման գործոն:



Նկ. 3. Հարված Սարգիս Բաղդասարյանին ուղղված՝ Տրետյակովյան պարկերասրահի գլխավոր տնօրեն Յուրի Կ. Կորոլյովի նամակից [4]



Նկ. 4. Դավիթ-Քեկի հուշամեդալը

Եզրակացություն: Հետազոտության առաջադրված խնդիրների լուծման արդյունքում որպես ընդհանրական եզրակացություն հանգել ենք հետևյալին.

1. Սարգիս Բաղդասարյանի «Դավիթ-Քեկ» ձիարձանը 20-րդ դարի հայ քանդակագործության բարձրարժեք գործերից է:

2. Այն ազգային խորհրդանիշներից է, մշակութային ժառանգության բացառիկ նմուշ, որով ընդգծվում է արվեստի դերակատարությունը ազգային ինքնության գիտակցության, ազգային մտածողության զարգացման գործում:

3. Մարմնավորում է ոչ միայն ազգային հերոսի կերպարը, այլ նաև միանում է ժամանակակից արվեստի առաքելությանը՝ լուսաբանելու և վերանայելու ազգային ու պատմական հիշողության դինամիկան:

4. Արձանի արվեստաբանական լուծումները՝ ի դեմս քանդակագործ Բաղդասարյանի, բացում են նոր դռներ հայ արվեստի ապագայի և մշակութային

երկխոսության համար՝ հաստատելով, որ արվեստը կարող է լինել ոչ միայն հասարակական փոփոխությունների խթան, այլ նաև ազգային արժեքների պահպանման ու փոխանցման հզոր մեխանիզմ:

5. Սարգիս Բաղդասարյանի ստեղծագործությունը հաջողված կերպարարձան է, որը խորհրդանշում է հայ ազատագրական պայքարի անգնահատելի ավանդույթները: Քանդակը ոչ միայն վերահաստատում է Դավիթ-Քեկի հիշատակը, այլև արտացոլում է հայ ժողովրդի անկոտրում ոգին՝ միահյուսելով անցյալը ներկայի հետ:

6. Սարգիս Բաղդասարյանի կերտած «Դավիթ-Քեկ» ձիարձանը հայ մոնումենտալ արվեստի նշանակալի նվաճումներից մեկն է, որը պահանջում է շարունակական ուշադրություն՝ որպես մեր ազգային մշակութի ժառանգության կարևորագույն մաս, միավորելով բարձր գեղարվեստական արժեքը, պատմական նշանակությունը և արդիականությունը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Балкинд Е.Л.** Феномен объема и пространства в скульптуре //Ученые записки Крымского федерального университета имени В.И. Вернадского: Философия. Политология. Культурология. -2017.-Том 3 (69), № 4.- С. 134–141.
2. **Aghasyan A.V.** Ways of development of Armenian fine art of the 19th-20th centuries.- Yerevan: Voskan Yerevantsi.-2009.- 292 p.
3. **Москалюк М.В.** Что такое искусство: современные смыслы и вызовы // ARTE.- 2021. - № 2.- С. 5–11.
4. Письмо генерального директора Государственной Третьяковской галереи Королева Ю.К. //Письмо от 10.08.1988 г, N К-2704/16. Национальный архив Армении, фонд N1012, Список N32, Дело N19.

Ա.Ա. ՕԳԱՆՅԱՆ

ХУДОЖЕСТВЕННОЕ ЗНАЧЕНИЕ СТАТУИ «ДАВИД БЕК» И ЕЕ РОЛЬ В КОНТЕКСТЕ АРМЯНСКОГО ИЗОБРАЗИТЕЛЬНОГО ИСКУССТВА

Проведен художественный анализ монументальной статуи «Давид Бек» скульптора Саркиса Багдасаряна. В ходе исследования изучены и представлены история создания статуи, ее технические особенности и художественная ценность. При этом наблюдались формальные и материальные особенности скульптуры, обращалось внимание на динамическое положение, детали и сочетание с окружающим ландшафтом. Особое внимание, в частности, уделено композиционным решениям скульптуры, прикрепленной к 17-метровому постаменту статуи, выполненной в виде горельефа, где 4 ноги коня находятся в воздухе. В статье раскрывается художественное значение статуи, показана ее роль в контексте армянского изобразительного искусства. Обсуждалось

символическое значение статуи в контексте армянской национально-освободительной войны. Следует отметить, что решение автора исторической личности «Давид Бек» стало не только ценным образцом искусства, но и важным символом национальной идентичности и культурного наследия.

Ключевые слова: Давид Бек, национальный герой, исторический контекст, освободительная борьба, статуя, Саргис Багдасарян, культурная ценность.

A.A. OHANYAN

THE ARTISTIC SIGNIFICANCE OF DAVID BEK'S STATUE AND ITS ROLE WITHIN ARMENIAN FINE ART

The artistic analysis of the monumental statue "David Bek" by the sculptor Sargis Baghdasaryan is introduced. During the research, we studied and presented the history of the creation of the statue, its technical features and artistic value. In doing so, we observed the formal and material features of the sculpture, paying attention to the dynamic position, details and combination with the surrounding landscape. A special attention to the compositional solutions of the sculpture is paid, in particular the statue attached to the 17-meter pedestal made in the form of a high relief, where the horse's four legs are in the air. The article reveals the artistic significance of the statue and its role in the context of Armenian fine art. In the article, we also discussed the symbolic meaning of the statue in the context of the Armenian National Liberation War. It should be noted that the author's decision to depict the historical figure "David Bek" has become not only a valuable example of art, but also an important symbol of national identity and cultural heritage.

Keywords: David Bek, national hero, historical context, liberation struggle, statue, Sargis Baghdasaryan, cultural value.